ՔԱՂՎԱԾՔ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.12.2019թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արտյոմ Գրիգորյանը, Վահագն Ավագյանը, Արմեն Մատինյանը, Սոխակ Մելքոնյանը, Գայանե Քալանթարյանը, Սեյրան Ղամբարյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Խորեն Վարդանյանը, Վահե Դոխոյանը, Մարինե Հովհաննիսյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Սեյրան Աղաբեկյանը, Արևիկ Լոքյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արկադի Փելեշյանը, Արեն Խաչատրյանը, Կարեն Դավթյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Արմեն Ավետյանը,Վահե Կոռյանը, Հայկազ Սիմիկյանը, Անահիտ Կարապետյանը, Կարեն Բեկչյանը, Սուրեն Կարապետյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ՝

Մարիամ Ապերյանը, Դավիթ Հակոբյանը:

Նիստից բացակայում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ *Ա.Ափինյանը*
«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ ՝

Հասմիկ Խլոպուզյանը, Տիգրան Նազարյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արման Սիրադեղյան, Ռոմիկ Մարգարյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամ՝

Հրաչիկ Ղամբարյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը, համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյաներ, ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և ՀԼՄ-ների ներկայացուցիչներ, քաղաքացիներ:

Նիստը վարող Մամիկոն Ասլանյանը ժամը 11.15-ին նիստը հայտարարեց բացված:

(Վանաձորի ավագանու 2019 թվականի 23.12.2019 ավագանու հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջովին առկա է համայնքապետարանի պաշտոնական կայքում):

Նիստը վարող, համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանն առաջարկեց օրակարգում կատարել փոփոխություն և հրատապության կարգով ներառել ներդրումային բնույթի «Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 76 հասցեի արևմտյան մասում գտնվող հողամասի հատակագծման նախագիծը հաստատելու և հողամասը «Բու լեռնահեծանվային պարկ» զբոսաշրջության զարգացման հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» ավագանու որոշման նախագիծ, որպես օրակարգի 19-րդ կետ՝ կատարելով օրակարգի հերթականության փոփոխություն:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել օրակարգը հավելյալ օրակարգային հարցով:

Կողմ՝ 27, ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը՝

1. Վանաձոր համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

զեկ. Լ.Դավթյան

3. «Վանաձոր համայնքի թիվ 11 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության երկրորդ մասնաշենքի վերակառուցում» ծրագրային հայտը Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ ներկայացնելու մասին

զեկ. Լ.Դավթյան

4. Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29–ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

5. Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29–ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

6. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում Վանաձոր համայնքի ավագանու խմբակցությունների փորձագետների և գործավարների ժամանակավորապես հաստիքներ նախատեսելուն համաձայնություն տալու և աշխատակիցների աշխատավարձի չափերը սահմանելու մասին

զեկ. Ա.Օհանյան

7. Վանաձոր համայնքի ավագանու 18 հոկտեմբերի 2019 թվականի թիվ 128 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Ա.Օհանյան

8. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակցության հետևանքով հաշմանդամ դարձած անձանց նկատմամբ գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին

զեկ. Վ.Դավիթավյան

9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի գոտիավորումը և գործակիցները սահմանելու, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի, ոչ բնակելի և բնակելի տարածքների վարձավճարների սակագները սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 25 հոկտեմբերի 2017 թվականի թիվ 86-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Վ.Դավիթավյան

10. Վանաձոր համայնքի Մոսկովյան փողոցի թիվ 58/53-3 հասցեում գտնվող հողամասը և դրա վրա գտնվող ավտոտնակը ուղղակի վաճառքի ձևով Ալեքսան Ավետիքի Հակոբջանյանին օտարելու մասին

զեկ. Վ.Դավիթավյան

11. «Վանաձորի Ալբերտ Ազարյանի անվան «Կենտրոն» համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզադահլիճները «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամին վարձակալությամբ հանձնելու և Վանաձոր համայնքի ավագանու 18 հոկտեմբերի 2019 թվականի թիվ 134 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Վ.Դավիթավյան

12. Վանաձոր համայնքի սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին

զեկ. Կ.Պառավյան

13. Վանաձոր համայնքի ավագանու 19 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 110 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Ս.Աբովյան

14. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ. Ս.Աբովյան

15. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ. Ս.Աբովյան

16. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

զեկ. Ս.Աբովյան

17. Ջեմմա Սիրվենի Խարազյանին սեփականության իրավունքով պատկանող Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց թիվ 21-1/2 հասցեում գտնվող հողամասը Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց թիվ 22-1/1 հասցեում գտնվող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին

զեկ. Ս.Աբովյան

18. Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 76 հասցեի արևմտյան մասում գտնվող հողամասի հատակագծման նախագիծը հաստատելու և հողամասը «Բու լեռնահեծանվային պարկ» զբոսաշրջության զարգացման հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

զեկ. Ս.Աբովյան

19. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ.Մ.Ասլանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1.ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին:

Նիստը վարող Մամիկոն Ասլայանը ամփոփ ներկայացրեց համայնքի 2020 թվականի բյուջեում համայնքի ղեկավարի լիազորությունների ուղղությամբ կատարվելիք ծրագրերը և դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցները

- Այնուհետ զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Հարցի քննարկման ընթացքում Ավագանու անդամ Ս.Աղաբեկյանը հեռացավ նիստերի դահլիճից, Ա.Ափինյանը եկավ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, դեմ՝ 8 /Ք.Մարուքյան, Վ.Կոռյան, Հ.Սիմիկյան, Ա.Կարապետյան, Ս.Կարապետյան, Ա.Ավետյան, Դ.Հակոբյան, Մ.Ապերյան/, ձեռնպահ՝ 2 /Կ.Ղուկասյան, Ս.Ղամբարյան/ , ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ- . Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 23, ձեռնպահ՝ 2 /Վ.Կոռյան, Ա.Կարապետյան/, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ - «Վանաձոր համայնքի թիվ 11 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության երկրորդ մասնաշենքի վերակառուցում» ծրագրային հայտը Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ ներկայացնելու մասին

Զեկուցեց աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29–ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /4 004 000 դրամ/:

- Զեկուցեց աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, դեմ՝ 4/Ք.Մարուքյան, Վ.Կռոյան, Ա.Կարապետյան, Գ.Քալանթարյան/, ձեռնպահ՝ 1 /Ս.Կարապետյան/, ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29–ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /19 268 000/:

- Զեկուցեց աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Հարցի քննարկման ընթացքում Ավագանու անդամ Հ.Մովսիսյանը հեռացավ նիստերի դահլիճից և չվերադարձավ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, ձեռնպահ՝ 2/Վ.Կռոյան, Կ.Ղուկասյան/ , ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ -Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում Վանաձոր համայնքի ավագանու խմբակցությունների փորձագետների և գործավարների ժամանակավորապես հաստիքներ նախատեսելուն համաձայնություն տալու և աշխատակիցների աշխատավարձի չափերը սահմանելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 24, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի ավագանու 18 հոկտեմբերի 2019 թվականի թիվ 128 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 24, ընդունվեց որոշում:

8. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակցության հետևանքով հաշմանդամ դարձած անձանց նկատմամբ գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմիեկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետ Վահագն Դավիթավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց որոշման նախագծի մեջ «Լեռնային Ղարաբաղի» բառերից հետո փակագծերի մեջ ավելացնել «(Արցախի Հանրապետության)» բառերը իրավական տարընթերցումներից խուսափելու նպատակով:

Քվեարկությամբ, կողմ՝ 24, ընդունվեց որոշում:

9. **ԼՍԵՑԻՆ-** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի գոտիավորումը և գործակիցները սահմանելու, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի, ոչ բնակելի և բնակելի տարածքների վարձավճարների սակագները սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 25 հոկտեմբերի 2017 թվականի թիվ 86-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետ Վահագն Դավիթավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը, որոշման մեջ «ոչ բնակելի և բնակելի տարածքների» բառերից հետո ավելացնել «գույքի» բառը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, դեմ՝ 1 /Ք.Մարուքյան/, ձեռնպահ՝ 1 /Ա.Կարապետյան/ , ընդունվեց որոշում:

10. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի Մոսկովյան փողոցի թիվ 58/53-3 հասցեում գտնվող հողամասը և դրա վրա գտնվող ավտոտնակը ուղղակի վաճառքի ձևով Ալեքսան Ավետիքի Հակոբջանյանին օտարելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետ Վահագն Դավիթավյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 18, ձեռնպահ՝ 2 /Վ.Կոռյան, Ա.Կարապետյան/, ընդունվեց որոշում:

11.ԼՍԵՑԻՆ- «Վանաձորի Ալբերտ Ազարյանի անվան «Կենտրոն» համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզադահլիճները «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամին վարձակալությամբ հանձնելու և Վանաձոր

համայնքի ավագանու 18 հոկտեմբերի 2019 թվականի թիվ 134 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետ Վահագն Դավիթավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 18, ընդունվեց որոշում:

12. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կարեն Պառավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, դեմ՝ 1/Ք.Մարուքյան/, ընդունվեց որոշում:

13. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի ավագանու 19 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 110 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, դեմ՝ 1/Դ.Հակոբյան/, ձեռնպահ՝ 1 /Վ.Կոռյան/, ընդունվեց որոշում:

14. ԼՍԵՑԻՆ-Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց որոշման նախագծին կից հավելվածից հանել հասարակական սպասարկման օբյեկտների կառուցման համար 1բ.13 ենթակետով Նարեկացի փողոցի թիվ 2/5-2 և 1բ,5 թնթակետով Աղայան փողոցի 44/2-3 հողամասերը և քվեարկել նախագիծը՝ առաջարկված փոփոխություններով:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, դեմ՝ 4/Ք.Մառուքյան, Վ.Կոռյան, Դ.Հակոբյան, Վ.Ավագյան/, ձեռնպահ՝ 1 /Ա.Կարապետյան/, ընդունվեց որոշում:

15. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գները սահմանելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, դեմ՝ 2/Ք.Մարուքյան, Դ.Հակոբյան/, ձեռնպահ՝ 3 /Վ.Կոռյան, Կ.Ղուկասյան, Ա.Կարապետյան/, ընդունվեց որոշում:

16. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 18, ձեռնպահ՝ 1 /Ա.Ավետյան/, ընդունվեց որոշում:

17. ԼՍԵՑԻՆ- Ջեմմա Սիրվենի Խարազյանին սեփականության իրավունքով պատկանող Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց թիվ 21-1/2 հասցեում գտնվող հողամասը Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց թիվ 22-1/1 հասցեում գտնվող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, ձեռնպահ՝ 1 /Վ.Կոռյան/, ընդունվեց որոշում:

18. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 76 հասցեի արևմտյան մասում գտնվող հողամասի հատակագծման նախագիծը հաստատելու և հողամասը «Բու լեռնահեծանվային պարկ» զբոսաշրջության զարգացման հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը, նիստը վարողը և կազմակերպության ներկայացուցիչը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

19.Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2020 թվականի փետրվարի 14-ը:

Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2020 թվականի փետրվարի 14-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 11.00-ն:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը